ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ,
ԿԱՌՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

05800604
№ 28
«5»-ը օգոստոսի , 2016 թ.

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ՝
պարոն Հ. Սիմոնյանին

Կից ձեզ ենք ներկայացնում Շիրակի մարզի Կառնուտ համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 28-ի թիվ 15-Ա որոշումը առ դիր 2 թերթից:

Ա. Գաբոյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԿԱՌՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 05800604

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 8048-16
05 08 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՌՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 15Ա

«28» հուլիսի 2016 թվական գյուղ Կառնուտ

ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՌՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.36 ՀԵԿՏԱՐ ԱՐՈՏԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «Վարդան Աղբյուր» սահմանափակ պատասխանատվության ընկերությունն տնօրենի 2016 թվականի հուլիսի 26-ի թիվ 011 գրությունը՝ ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով հողամաս տրամադրելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կառնուտի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կառնուտի համայնքի սեփականությանը հանդիսացող «Վարդան Աղբյուր» սահմանափակ պատասխանատվության ընկերությունն կողմից շահագործվող Կամոյի դատցիտային տուֆ քարի հանքավայրի հարակից տարածքի 124-001-02 կադաստրային ծածկագրով 1.36 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտի հողամասը ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել «Վարդան Աղբյուր» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը (հետագայում՝ Ընկերություն):

2. Ընդերքի հետախուզական աշխատանքների իրականացման համար ժամկետ սահմանել 2016 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասում ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար վարձավճարի ամսեկան չափը սահմանել 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Համայնքի ղեկավար Արծրունի Գաբոյանին

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել հողամասի հետախուզական աշխատանքներ կատարելու իրավունքի տրամադրման պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ 3. Դեմ 1 Ձեռնպահ 0

ԺԻՐԱՅՐ ԳԱԲՈՅԱՆ՝ _____

ՀՐԱՆՏ ԱՓԻԿՅԱՆ՝ _____

ՀՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆ ԳԱԲՈՅԱՆ**

«28» հուլիսի 2016 թվական
գյուղ Կառնուտ